



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ
ՈՐՈՇՈՒՄ

«27» հոկտեմբեր 2022 թվականի N 18-Վ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 308-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2021 թվականի նոյեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2022 թվականի գործունեության ծրագիրը հաստատելու մասին» թիվ 308-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ մասի 21-րդ կետում «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն» բառերից հետո լրացնել «, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն:» բառերով:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Ա. ԲԱԽՉԱԳՈՒԼՅԱՆ